

պատմութեան ունէր՝ բնական է միւսն ալ ունենալու էր, որով մէկը միւսին պատմութեանն ալ կրելով կ'ունենար երկու պատմութեան, որոնցմով խաղակցիլ առնուազն անհեթեթ պիտի ըլլար: Եւ ինչո՞ւ կրէի ի խաղու զպատմութեանն ձեր զկնի ձեր, երբ կարելի է զանոնք տեղ մը թողուլ խաղալայրին մօտ եւ ազատ խաղալ:

Որոչ է որ արկանելին պատմութեանէ տարբեր բան մըն էր⁽¹⁵⁾: Ըստ իս գորգ կամ կապերտ, խաղալու յատուկ, որ յարմար տեղ մը կը փոռէր անոր վրայ խաղակիցներ խաղալու համար: Փարպեցի Վահան Մամիկոնեանէ նուազ բնկերական դիրքին պատճառաւ կրնար ըսել «կրելով ի խաղու դարկանելիս ձեր զկնի ձեր»:

Մենք իր կարգին պիտի տեսնենք որ գորգերը որոչ պաշտօններ ալ ունէին: Կան խաղի, զբօսանքի, զուարճութեան գորգեր, ինչպէս կային արդարութեան, պատուոյ, ճաշի կամ խնճոյքի եւն. գորգեր, աղօթքի գորգեր: Ուրեմն որոչ է որ Փարպեցի դիրքով ստորագաս Վահան Մամիկոնեանի, այլ անոր սննդակից ու խաղակից, թող անկէ աւելի տարէջ ըլլայն ալ, իրենց խաղերուն միջոցին ինքը կը կրէր խաղի գորգը:

Ուխտանէս ալ կը յիշէ «զարկանելիս քահանայից եւ սարկաւագաց»⁽¹⁶⁾: Ես՝ ասով կ'ուզեմ հասկնալ քահանայից եւ սարկաւագաց գորգեր, որոնք յատուկ էին այդ եկեղեցականներուն՝ եկեղեցւոյ մէջ արարողութեանց ժամանակ: Մինչեւ մեր օրերը կարելի է տեսնել Հայ եկեղեցւոյ դասէն ներս յատուկ ափուսած գորգեր, որոնց վրայ կը բազմէին եկեղեցական այլ եւ այլ պաշտօնեաներ՝ արարողութեանց միջոցին: Քահանայից եւ սարկաւագաց պատմութեանները չէին կրնար արկանելիս կոչուիլ, քանի որ այդ կրօնաւորներուն եկեղեցական հանդերձանքը արդէն վաղուց ունէր իր մասնաշատուկ կոչումները, ինչպէս փիլոն, շուրջաս, ուրար, վակաս եւն. եւն.: Սակայն զարկանելիս հանդերձանքէ տարբեր նշանակութիւն ունենալուն կը վկայէ նաեւ Յովհ. Կաթողիկոս գրելով «զհանդերձանս եւ զարկանելիս»⁽¹⁷⁾. որոչ է որ զարկանելիս հոս զհանդերձանսէն տարբեր բան է, եւ ըստ իս՝ գորգ:

1202էն գորգի մը հայերէն յիշատակարանը որոչ կը կարդացուի սապէս. «Արկանելիս Կիրակոս Բանտիրի ետու յիշատակ Հռիփսիմէի տիկնոյ ՈՄԱ (1202) թւին զսա ողորմիս ասէս»: Ասիկա պէտք է ամէն տարակոյս փարատէ որ արկանելի գորգ ալ կը նշանակէ:

Աստուածաշունչի թարգմանութեան մէջ Եսայեայ մարգարէութեան

(15) Ա. Արեղեան «Հայրենիք» ամսագրի մէջ ստորագրեց «Եղիշէի եւ Ղ. Փարպեցիի Ազգագրական Ժառանգութիւնը» (1932, թիւ 10, էջ 153-61), որուն մէջ կ'ըսէ արկանելի բառին մասին, «որոչ չէ Քէ զս մանկական ի՞նչ խաղ է եւ թէ արկանելիք բառի տակ յատկապէս ի՞նչ խաղալիք հասկնալու է: Պարզ է սակայն, որ նեակու, արկանելու խաղալիք է եղած» (էջ 157):

Արկանելիք երբեք խաղալիք չէ եւ հեղինակը զս՝ եղած է շփոթութեան մը:

(16) էջ 66:

(17) Պատ. - Սողէմ, 1867, էջ 139: